

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



«ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԲԸ

ՈՒԺԻ մեջ է 14 հունվարի 2026թ.-ից

	ՀԱՎԱԿՈՌՈՒԴՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	POL 15		
		Հաստատման ամսաթիվ 23/12/25	Խմբագրություն 2	Էջ 2/9

ՆՊԱՏԱԿԸ

«Հակակոռուպցիոն քաղաքականության» (այսուհետ՝ «Քաղաքականություն») նպատակն է սահմանել «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ում (այսուհետ՝ «Բանկ») կոռուպցիայի կանխարգելման ու վերացման հիմնական սկզբունքներն ու մոտեցումները, որոնք ուղղված են կոռուպցիայի կանխարգելմանը և կոռուպցիոն ռիսկերի կառավարմանը՝ Բանկի աշխատակիցների ու ղեկավարության (այսուհետ՝ Աշխատակիցներ) կողմից կոռուպցիայի հակազդմանը վերաբերող ՀՀ օրենսդրական նորմերի պահանջներին նպատակով:

ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Քաղաքականությամբ սահմանված նորմերը կիրառվում են Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների բոլոր աշխատակիցների կողմից:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոռուպցիա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 1-ին հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցանքներ, մասնավորապես՝ ի պաշտոնե տրված լիազորությունների չարաշահում՝ անձնական օգուտ ստանալու նպատակով:

Կոռուպցիոն գործոններ՝ գործոններ, որոնք ստեղծում են կոռուպցիայի առաջացման պայմաններ, մասնավորապես, բիզնես գործընթացներում և/կամ Բանկի ներքին իրավական ակտերում այնպիսի պայմանների առկայություն, որոնք Բանկի աշխատակիցների համար սահմանում են լիազորությունների չիմնավորված լայն շրջանակ (այդ թվում՝ տվյալ աշխատակցի աշխատանքային պարտականությունների կատարման համար ոչ անհրաժեշտ իրավասությունների կամ ավել մեծ լիազորությունների առկայություն), կամ ընդհանուր կանոններից բացառությունների կիրառման չիմնավորված հնարավորություններ, ինչպես նաև հաճախորդների, գործընկերների և Բանկի աշխատակիցների առջև դնում են անորոշ, դժվար իրագործելի և/կամ ծանրացուցիչ պահանջներ:

Կոռուպցիայի հակազդում՝ Կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված գործողություններ, այդ թվում կոռուպցիայի պատճառների հայտնաբերում և հետազայում դրանց վերացում, Կոռուպցիոն գործոններ հայտնաբերում և կանխարգելում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղությամբ միջոցառումների իրականացում, ինչպես նաև կոռուպցիոն իրավախախտումների հայտնաբերում և դրանց հետևանքների վերացում:

Կոռուպցիոն գործողություններ՝ Առևտրային կաշառք տալը կամ ընդունելը, կաշառք տալու կամ ընդունելու միջնորդությունը, լիազորությունների չարաշահումը, Բանկի աշխատակցի կողմից իր դիրքի ապօրինի օգտագործումը՝ իր կամ այլ անձանց համար դրամ, արժեքավոր իր, այլ գույք, ծառայություններ կամ որևէ իրավունքի ձևով օգուտ ստանալու համար, կամ Բանկի հաճախորդների կամ գործընկերների կողմից Բանկի աշխատակցին օգուտների կամ իրավունքների ապօրինի տրամադրումը:

Լիազորությունների չարաշահում՝ Բանկի աշխատակիցների կողմից՝ Բանկի շահերին հակառակ, իրենց լիազորությունների՝ իրենց կամ ուրիշ անձանց օգտին օգտագործում, կամ իրենց կամ ուրիշ անձանց համար առավելություններ ձեռք բերելու նպատակով օգտագործում, որի արդյունքում վնաս է պատճառվում այլ անձանց և/կամ Բանկի իրավունքներին ու օրինական շահերին և/կամ համբավին:

Առևտրային կաշառք՝ Բանկի աշխատակցի կողմից՝ վերջինիս զբաղեցրած դիրքով պայմանավորված, անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալու/տրամադրելու, պահանջելու, ստանալու/տրամադրելու առաջարկ ներկայացնելը կամ ստանալու/տրամադրելու առաջարկը կամ խոստումն ընդունելը՝ իր ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի կամ իր օգտին գործողություն կատարելու կամ չկատարելու համար:

	ՀԱՎԱԿՈՒՌՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	POL 15		
		Հաստատման ամսաթիվ 23/12/25	Խմբագրություն 2	Էջ 3/9

Նվեր՝ ցանկացած նյութական կամ ոչ նյութական օգուտ, երրորդ անձանցից՝ մատակարարներից, գործընկերներից, հաճախորդներից, պոտենցիալ աշխատակիցներից և/կամ որևէ այլ անհատի/կազմակերպության կողմից կամ առաջարկվող Բանկի աշխատակիցների և/կամ ղեկավարության կողմից, որը կարող է վտանգել արդար, անաչառ և սկզբունքային որոշումներ կայացնելու պարտավորությունը:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն քաղաքականությունը մշակված է Կոռուպցիայի դեմ միջազգային կոնվենցիաների, ՀՀ գործող օրենսդրության, «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի, Բանկի կանոնադրության և Բանկի այլ ներքին իրավական ակտերի հիման վրա:

1.2. Սույն քաղաքականությունն ուղղված է Բանկի ու Բանկի աշխատակիցների կողմից Կոռուպցիայի հակազդման վերաբերյալ միջազգային և օրենսդրական այլ նորմերի պահպանմանն ու ամրապնդմանը, թափանցիկ և արդար բիզնեսի էթիկայի բարձր չափանիշների ներդրմանը և Բանկի գործարար համբավի պահպանմանը:

ԳԼՈՒԽ 2. ԿՈՐՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴԻՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

2.1. Կոռուպցիայի հակազդման նպատակներն են՝

- 1) Բանկի բաժնետերերի, ներդրողների, գործընկերների, աշխատակիցների և երրորդ անձանց շրջանում Բանկի հակակոռուպցիոն քաղաքականության և Կոռուպցիայի ցանկացած դրսևորման անթույլատրելիության միասնական ընկալման ստեղծումը,
- 2) Բանկի և նրա աշխատակիցների կողմից կոռուպցիոն գործունեության մեջ ներգրավվելու ռիսկերի զսպումը,
- 3) Բանկի բաժնետերերի, ներդրողների, գործընկերների, աշխատակիցների և Բանկի հետ համագործակցող անձանց կողմից հակակոռուպցիոն օրենսդրության պահանջների ապահովման համար պատասխանատվության սահմանումը,
- 4) Բանկում Կոռուպցիայի հակազդման համար բարենպաստ գործընթացների և պայմանների ստեղծումը, որոնք միտված են Կոռուպցիոն գործողությունների վերաբերյալ կասկածների առաջացման դեպքում համապատասխան իրավասու ստորաբաժանման տեղեկացմանը, Կոռուպցիայի հակազդման գործիքակազմի մշտական վերլուծությանը և բարելավմանը:

2.2. Կոռուպցիայի հակազդման սկզբունքներն են՝

- 1) ցանկացած ձևի և դրսևորման Կոռուպցիայի անընդունելիություն,
- 2) գործարար հարաբերությունների ռիսկի հնարավորինս զսպում այնպիսի հաճախորդների/գործընկերների/ներդրողների/այլ անձանց հետ, ովքեր կարող են ներգրավված լինել Կոռուպցիոն գործողությունների մեջ, կամ հանդուրժողական վերաբերմունք են ցուցաբերում նման գործողությունների նկատմամբ,
- 3) Բանկի գործունեության ընթացքում Կոռուպցիայի կանխարգելիչ միջոցների կիրառման կարևորության խթանում,
- 4) Կոռուպցիայի կանխարգելման համար ներդրված համապատասխան ներքին գործընթացների արդյունավետության մշտական մոնիտորինգ և դրանց շարունակական կատարելագործում,
- 5) պատասխանատվություն Կոռուպցիոն գործողությունների համար:

	ՀԱՎԱԿՈՒՌՈՒԴՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	POL 15		
		Հաստատման ամսաթիվ 23/12/25	Խմբագրություն 2	Էջ 4/9

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿՈՌՈՒԴՑԻԱՅԻ ՀԱՎԱԶԴԻՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

3.1. Բանկի ղեկավարները և աշխատակիցները իրենց կողմից իրականացվող գործունեության շրջանակներում պահպանում են Կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողակությունը, հետևում են պրոֆեսիոնալ վարքագծի կանոններին՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ, Վարվելակերպի և ներքին կարգապահության կանոնների մասին քաղաքականությամբ՝ [POL 11](#), և սույն քաղաքականությամբ սահմանված Կոռուպցիայի հակազդման սկզբունքները և պաշտպանելով Բանկի բաժնետերերի, գործընկերների և հաճախորդների համբավը:

3.2. Բանկի կառավարման մարմինները և ղեկավարները Կոռուպցիայի հակազդման համակարգի արդյունավետ աշխատանքի ապահովման նպատակով պարտավոր են՝

1) համոզվել, որ Կոռուպցիայի հակազդման համակարգը, ներառյալ՝ սույն քաղաքականությունը և նպատակները, սահմանված են և դրանց համարժեքությունը Բանկի գործունեության ընթացքում առաջացող կոռուպցիոն ռիսկերի կառավարման նպատակով պատշաճ գնահատվում է,

2) ապահովել սույն քաղաքականության նպատակներին համահունչ Կոռուպցիայի հակազդման համակարգի պահանջների ներդրումը և ինտեգրումը Բանկի գործարար գործընթացներում,

3) աջակցել Կոռուպցիայի հակազդման համակարգի արդյունավետ գործողությանը և բավարար ռեսուրսներ հատկացնել դրա համար,

4) միջոցներ ձեռնարկել սույն քաղաքականությունը բոլոր շահագրգիռ կողմերին (ներդրողներ, աշխատակիցներ, գործընկերներ, հաճախորդներ) հասանելի դարձնելու ուղղությամբ,

5) խթանել Բանկում Կոռուպցիայի հակազդման կարևորությունը, Կոռուպցիոն գործողությունների նկատմամբ անհանդուրժողականությունը և մշտապես հսկել Կոռուպցիայի հակազդման համակարգի աշխատանքի արդյունավետությունը,

6) խրախուսել Կոռուպցիոն գործողությունների վերաբերյալ կասկածների դեպքում այդ դեպքերի վերաբերյալ Բանկի համապատասխան իրավասու ստորաբաժանմանը պատշաճ տեղեկացումը, այդ թվում՝ ապահովել իրազեկման ուղիներ, ներառյալ՝ անանուն տեղեկացման հնարավորություն («Թեժ գիծ»),

7) ապահովել Կոռուպցիայի վերաբերյալ տեղեկացում իրականացնող աշխատակիցների շահերի պաշտպանվածությունը:

3.3. Բանկի հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետությունը մշտադիտարկվում և պարբերաբար գնահատվում է Բանկի խորհրդի կողմից, իսկ Կոռուպցիոն ռիսկերի ընթացիկ կառավարումն իրականացվում է Բանկի տնօրինության կողմից:

ԳԼՈՒԽ 4. ԿՈՌՈՒԴՑԻԱՅԻ ՀԱՎԱԶԴԻՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

4.1. Բանկն ապահովում է Կոռուպցիայի կանխարգելումը սույն քաղաքականությամբ և Բանկի այլ ներքին իրավական ակտերով նախատեսված միջոցառումների իրականացմամբ:

4.2. Բանկն ապահովում է այնպիսի վարքագծի կանոնների և/կամ ստանդարտների առկայությունը և կիրառումը, որոնք նախատեսում են Բանկի աշխատակիցների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների իրավական, բարեխիղճ և պատշաճ կատարումը:

4.3. Բանկն ապահովում է գնումների պատշաճ համակարգի գործունեություն, որը հիմնված է թափանցիկության, մրցակցության և որոշումների կայացման օբյեկտիվ չափանիշների վրա և արդյունավետ է գործում Կոռուպցիայի կանխարգելման տեսանկյունից:

4.4. Բանկում ներդրված են գործառույթներ, որոնք թույլ են տալիս բացահայտել Բանկի աշխատակիցների կողմից Կոռուպցիոն գործողությունների մեջ ներգրավման ռիսկերը:

	ՀԱՎԱԿՈՒՈՒԴՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	POL 15		
		Հաստատման ամսաթիվ 23/12/25	Խմբագրություն 2	Էջ 5/9

4.5. Բանկում ներդրված են գործառույթներ, որոնք թույլ են տալիս բացահայտել հաճախորդների, գործընկերների և մատակարարների Կոռուպցիոն գործունեության մեջ ներգրավման ռիսկերը:

4.6. Բանկում ներդրված են նվերների ստացման/ընդունման վերաբերյալ էթիկայի կանոններ, որոնք պարտադիր են պահպանման բոլոր աշխատակիցների և ղեկավարների կողմից:

4.7. Բանկում գործում է կառուցվածքային ստորաբաժանում՝ Համապատասխանության ծառայությունը, որի գործառույթները ներառում են Կոռուպցիայի հակազդման ուղղությամբ հսկողության իրականացում և որը ապահովված է բավարար ռեսուրսներով և օժտված է անկախությամբ Կոռուպցիայի հետ կապված հարցերն անմիջապես Բանկի խորհրդին ներկայացնելու համար:

4.8. Համապատասխանության ծառայությունը Կոռուպցիայի հակազդման համակարգի շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) Կոռուպցիայի հակազդման համակարգի աշխատանքի սույն քաղաքականության պահանջներին համապատասխանության հսկողություն,

2) Բանկի տնօրինությանը և խորհրդին առնվազն տարեկան կտրվածքով Բանկում Կոռուպցիայի հակազդման համակարգի աշխատանքի, ինչպես նաև Կոռուպցիայի ռեպերի վերաբերյալ հաշվետվության ներկայացում,

3) Կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ միջոցառումների իրականացում, ներառյալ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված գործընթացների հակակոռուպցիոն փորձաքննությունը՝ նոր բիզնես գործընթացներ և ընթացակարգեր ներդնելիս, ինչպես նաև գործող բիզնես գործընթացները և ընթացակարգերը փոփոխելիս,

4) Կոռուպցիոն ռիսկերի կառավարում Բանկում գործող Համապատասխանության ռիսկերի կառավարման մեթոդաբանության համաձայն,

5) Կիրառվող միջազգային հակակոռուպցիոն իրավական նորմերի, ՀՀ հակակոռուպցիոն օրենսդրության մոնիտորինգ և Կոռուպցիայի հակազդման համակարգի վրա դրանց փոփոխությունների ազդեցության գնահատում և Բանկի կառավարման մարմիններին/աշխատակիցներին դրանց վերաբերյալ իրազեկում,

6) Բանկում հակակոռուպցիոն կորպորատիվ գիտակցության և մշակույթի կազմավորմանն ուղղված միջոցառումների իրականացում, այդ թվում՝ կոռուպցիոն ռիսկերի և դրանց զսպման թեմայով աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում և պարբերական ուսուցում:

4.9. Բանկում կանոնավոր կերպով իրականացվում է ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արտաքին աուդիտ, հաշվապահական հաշվետվություններում տվյալների ամբողջական և ճշգրիտ արտացոլման ստուգմամբ՝ ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն:

4.10. Ներքին հսկողության համակարգի շրջանակներում Ներքին աուդիտի կողմից իրականացվում է Բանկի գործունեության պարբերական աուդիտ, որը ներառում է Բանկի կողմից իրականացված վճարումների օրինականության ընտրովի ստուգումներ, դրանց տնտեսական հիմնավորվածության և նպատակահարմարության ստուգումներ, այդ թվում նաև՝ դրանց հաստատումը առաջնային հաշվառման փաստաթղթերով և համապատասխանությունը սույն քաղաքականությամբ սահմանված պահանջներին: Բանկի Ներքին աուդիտի ստուգումները ներառում են նաև Կոռուպցիայի հակազդման համակարգի արդյունավետության գնահատումը:

ԳԼՈՒԽ 5. ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԵՐԻ ԵՎ ԲԻԶՆԵՍ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Բանկը որդեգրել է կոռուպցիայի և կաշառակերության հանդեպ զրո հանդուրժողականության քաղաքականություն:

5.2. Բանկը, իր հետ համագործակցող անձանց համար, սահմանում է հստակ պահանջներ համաձայն՝ ««Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի հետ համագործակցող կազմակերպությունների համար էթիկայի

	ՀԱՎԱԿՈՌՈՒԴՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	POL 15		
		Հաստատման ամսաթիվ 23/12/25	Խմբագրություն 2	Էջ 6/9

և բնապահպանական վարքագծի կանոններ» փաստաթղթի՝ [eFO 25-05-03](#):

5.3. Բանկը չի ֆինանսավորում քաղաքական կուսակցությունների նախընտրական քարոզարշավները, քաղաքական միջոցառումները կամ շարժումը, ինչպես նաև չի տրամադրում նախընտրական գործընթացների ֆինանսավորման նպատակով վարկեր քաղաքական պաշտոնի թեկնածուներին:

5.4. Բանկը խստիվ արգելում է աշխատակիցներին որևէ կերպ մասնակցել կաշառակերության դեպքերին՝ անկախ ձևից կամ պատճառից, հանգամանքներից և նպատակներից և պարտավորեցնում է աշխատողներին զերծ մնալ նման գործողություններից:

5.5. Բանկի աշխատակիցները, անկախ զբաղեցրած դիրքից ու պաշտոնից, պետք է խուսափեն Բանկի գործունեության հետ առնչվող հարցերում նվերների ստացման փաստացի և թվայն իրավիճակներից:

5.6. Նվերների հայցումը/պահանջումը Բանկի հաճախորդներից, մատակարարներից կամ Բանկի հետ գործնական առնչություն ունեցող ցանկացած գործընկերոջից **խստորեն արգելվում է**:

5.7. Բանկի աշխատակիցներին չի թույլատրվում ստանալ/ընդունել նվերներ երրորդ կողմից կամ նրանց տալ նվերներ կամ երրորդ կողմերին մատուցել կամ ստանալ բիզնես հյուրասիրություն, բացառությամբ.

1) գովազդային նյութերի, խորհրդանշական նվերների (օրացույցներ, գրիչներ, նոթատետրեր, բրենդավորված պարագաներ և այլն), որոնք տրվում են տոների կամ հատուկ իրադարձությունների հետ կապված և նպատակ չունեն աշխատանքային որոշումների կայացման գործընթացում ազդել Բանկի, Բանկի ղեկավարների և/կամ որևէ աշխատակցի վրա,

2) պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող Նվերների կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունների, եթե բիզնես հյուրասիրությունը չի մատուցվում աշխատանքային որոշումների կայացման վրա ազդեցություն գործելու նպատակով:

5.8. Քաղաքականության սույն գլխի իմաստով «հյուրասիրություն» է համարվում այն նվերը, որն առաջարկվել, տրվել կամ ստացվել է պաշտոնական հարաբերություններ սկսելու, դրանք ամրապնդելու կամ զարգացնելու նպատակով: Այն ընդգրկում է, բայց չի սահմանափակվում ընդունելության, ժամանցային, սոցիալական կամ սպորտային միջոցառումների հրավերներով և առաջարկներով:

5.9. Կանխիկ կամ անկանխիկ գումարի ընդունումը (այդ թվում՝ գործարքների կատարման արդյունքում հաճախորդների կողմից չվերցված մանրադրամի, եթե անգամ հաճախորդն ինքն է առաջարկում վերցնել), անկախ գումարի չափից, **խստորեն արգելվում է**:

5.10. Բանկի աշխատակիցները պետք է զերծ մնան հաճախորդների, գործընկերների կամ ծառայություններ մատուցողների կողմից առաջարկվող ցանկացած նվեր ընդունելուց՝ առաջարկը բարեհամբույր և պրոֆեսիոնալ կերպով մերժելով:

5.11. Բանկի աշխատողներին արգելվում է ընդունել խրախուսական վճարներ աշխատանքային որոշումները հօգուտ որևէ շահագրգիռ կողմի կայացնելու, գործընթացներն արագացնելու կամ որևէ կերպ գործընթացի վրա ազդելու նպատակով (օրինակ՝ իրեն հասանելի կարևոր հանգամանքներ չբացահայտելու և/կամ ոչ ամբողջությամբ, խեղաթյուրված ներկայացնելու միջոցով և այլն):

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ/ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՎԱԿՈՐՈՒԴՅՈՒՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

6.1. Բանկի կողմից երրորդ անձանց հետ համագործակցության գործընթացների շրջանակներում իրականացվում են գործընկերների/մատակարարների գործարար համբավի ուսումնասիրության ընթացակարգեր կոռուպցիոն գործունեության մեջ Բանկի ուղղակի/անուղղակի ներգրավման ռիսկերի բացահայտման համար: Նշված ընթացակարգերն իրականացնելու նպատակով Բանկը, նախքան գործընկերների/մատակարարների հետ գործարար հարաբերություններ հաստա-

	ՀԱՎԱԿՈՒՈՒԴՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	POL 15		
		Հաստատման ամսաթիվ 23/12/25	Խմբագրություն 2	Էջ 7/9

տելը, իրականացնում է դրանց հետ կապված Կոռուպցիոն ռիսկերի բացահայտում (այսուհետ՝ Հակակոռուպցիոն ստուգում):

6.2. Գործընկերների/մատակարարների Հակակոռուպցիոն ստուգումն իրականացվում է Բանկի Համապատասխանության ծառայության կողմից հետևյալ գործընթացների միջոցով՝

1) Բանկի գործընկերների/մատակարարների իրական շահառուների բացահայտում (այդ թվում՝ Ներքին դիտարկումների ծառայության հետ համագործակցության միջոցով),

2) գործընկերների/մատակարարների, նրանց իրական շահառուների Բանկի հետ փոխկապակցվածության ստուգում (այդ թվում՝ Ներքին դիտարկումների ծառայության հետ համագործակցության միջոցով),

3) գործընկերների/մատակարարների կողմից Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում գործող օրենսդրական պահանջների խախտման վերաբերյալ տեղեկատվության բացահայտում,

4) գործընկերների/մատակարարների գործունեության վերաբերյալ այլ Կոռուպցիոն գործոնների առկայության ստուգում (այդ թվում՝ Անվտանգության ծառայության հետ համագործակցության միջոցով),

5) գործընկերների/մատակարարների հետ կնքվող պայմանագրերում գործակալական և կոմիսիոն վճարների համարժեքության գնահատում, Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ դրանցում հակակոռուպցիոն դրույթների ներառում:

6.3. Բանկը չի համագործակցում միջինից բարձր համապատասխանության ռիսկեր առաջացնող գործընկերների/մատակարարների հետ, ինչպես նաև այն անձանց հետ, ում վերաբերյալ առկա է Կոռուպցիային մեջ ներգրավված լինելու և/կամ Կոռուպցիոն գործողություններ թույլ տալու վերաբերյալ տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 7. ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴԽԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

7.1. Բանկի աշխատակիցները պարտավոր են զերծ մնալ Կոռուպցիոն գործողություններից, մասնավորապես՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն, անձամբ կամ երրորդ անձանց միջնորդությամբ Կոռուպցիոն գործողություններին մասնակցելուց, կաշառք առաջարկելուց կամ ստանալուց, իրենց լիազորությունները չարաշահելուց, վարչական կամ այլ բնույթի ֆորմալ պահանջները շրջանցելու նպատակով, դրամ, արժեքներ, այլ գույք կամ գույքային բնույթի ծառայություններ տալուց և/կամ այլ գույքային իրավունքներ իրենց կամ երրորդ անձանց համար ստանալուց:

7.2. Բանկի աշխատակիցները իրենց գործունեության ընթացքում պարտավոր են պահպանել ՀՀ հակակոռուպցիոն օրենսդրության, սույն քաղաքականության և Բանկի այլ ներքին իրավական ակտերի պահանջները:

7.3. Բանկի աշխատակիցները իրենց գործունեության ընթացքում պարտավոր են զերծ մնալ շահերի բախում առաջացնող գործողություններից:

7.4. Բանկի աշխատակիցները Կոռուպցիայի կամ Կոռուպցիոն գործողության վերաբերյալ կասկած ունենալու դեպքում պարտավոր են անմիջապես հայտնել այդ կասկածի վերաբերյալ Բանկի համապատասխանության ծառայության ղեկավարին՝ համաձայն Խախտումների և անհամապատասխանությունների «Թեժ գիծ» ուղու գործունեության ընթացակարգի՝ իրենց նախընտրած եղանակով: Տվյալ դեպքում Համապատասխանության ծառայության ղեկավարը պարտավոր է գաղտնի պահել նշված աշխատակիցների անունները և իրականացնել ստացված տեղեկատվության մասով ծառայողական քննություն իր լիազորությունների շրջանակներում Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով, անհրաժեշտության դեպքում՝ ներգրավելով Անվտանգության ծառայության ղեկավարին:

7.5. Բանկի աշխատակիցները, ովքեր հրաժարվում են այլ աշխատակիցների դրոմամբ Կոռուպցիոն գործողություններ իրականացնելուց կամ նրանք, ովքեր տեղեկատվություն են տրամադրում

	ՀԱՎԱԿՈՌՈՒԴՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	POL 15		
		Հաստատման ամսաթիվ 23/12/25	Խմբագրություն 2	Էջ 8/9

այլ աշխատակիցների կողմից նման գործողությունների կատարման փաստերի/կասկածի վերաբերյալ, պաշտպանված են բացասական հետևանքներից (աշխատանքից ազատման սպառնալիք, կարգապահական պատասխանատվության ենթարկելու սպառնալիք, աշխատանքին խոչընդոտումը, այլ սպառնալիքներ): Եթե առկա է նման սպառնալիք, ապա այդ մասին նույնպես պետք է տեղեկացնել Համապատասխանության ծառայության ղեկավարին: Տեղեկատվություն տրամադրող անձի ինքնությունը և տրամադրված տեղեկատվությունը պահվում են խիստ գաղտնի:

7.6. Աշխատակիցների մոտ սույն քաղաքականությամբ սահմանված պարտավորությունները ամրապնդելու նպատակով Բանկը, աշխատանքի ընդունելիս յուրաքանչյուր աշխատակցի ծանոթացնում է Բանկում գործող Վարվելակերպի և ներքին կարգապահության կանոնների մասին քաղաքականությանը՝ [POL 11](#), իսկ նրանց հետ աշխատանքային պայմանագիր կնքելիս՝ պարտադիր ներառում է դրանում սույն քաղաքականության սկզբունքները և պահանջները, ինչպես նաև հակակոռուպցիոն օրենսդրության նորմերը պահպանելու վերաբերյալ աշխատակցի պարտավորության և պատասխանատվության մասին դրույթներ:

ԳԼՈՒԽ 8. ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

8.1. Հակակոռուպցիոն քաղաքականության պահանջների վերաբերյալ Համապատասխանության ծառայության կողմից իրականացվող ուսուցումն առնվազն անդրադառնում է՝

- 1) սույն քաղաքականությանը և Կոռուպցիայի հակազդման համակարգի հիմնական պահանջներին և դրանց պահպանման մասով աշխատակիցների պարտավորություններին,
- 2) Կոռուպցիոն ռիսկերին և Բանկի և Բանկի աշխատակիցների համար դրանց հետևանքներին,
- 3) Կոռուպցիոն գործողություններին և իրավիճակներին, որոնք կարող են դրանց նպաստել,
- 4) Կոռուպցիոն գործոններին և դրանց կանխարգելմանը,
- 5) Կոռուպցիոն գործոններին, Կոռուպցիոն գործողությունների կասկածի դեպքում աշխատակցի վարվելակերպին, դրանց վերաբերյալ ներքին իրազեկման կարգին,
- 6) Կոռուպցիայի հակազդման պահանջների մասով տեղեկատվության ստացման աղբյուրներին:

8.2. Հակակոռուպցիոն քաղաքականության պահանջների վերաբերյալ Համապատասխանության ծառայությունը տարին մեկ անգամ կազմակերպում է ուսուցում Բանկի բոլոր աշխատակիցների համար: Նոր ընդունված աշխատակիցների ուսուցումն իրականացվում է աշխատանքի ընդունումից հետո երեք ամսվա ընթացքում:

8.3. Համապատասխանության ծառայությունը պահպանում է Բանկի կողմից իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականության պահանջների վերաբերյալ անցկացված ուսուցումների արդյունքները և նյութերը առնվազն **հինգ** տարի:

ԳԼՈՒԽ 9. ՀԱՎԱԿՈՌՈՒԴՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՇՏԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

9.1. Բանկի կողմից վարվող հակակոռուպցիոն քաղաքականության բարելավման նպատակով Բանկի կառավարման մարմիններն առնվազն տարեկան կտրվածքով դիտարկում և վերլուծում են հետևյալ տեղեկատվությունները՝

- 1) նախորդ տարվա վերլուծության արդյունքները,
- 2) Կոռուպցիայի հակազդման համակարգի վրա ազդեցություն ունեցող ներքին և արտաքին գործոնների փոփոխությունը,
- 3) Կոռուպցիայի հակազդման համակարգի գործունեության արդյունքները, ներառյալ՝ կիրառված ուղղիչ և կանխարգելիչ գործողությունները, իրականացված մոնիտորինգների և

	ՀԱՎԱԿՈՒՈՒԴՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	POL 15		
		Հաստատման ամսաթիվ 23/12/25	Խմբագրություն 2	Էջ 9/9

գնահատումների արդյունքները, իրականացված աուդիտների արդյունքները, Կառույցիայի դեպքերի վերաբերյալ տեղեկացման և դրանց արդյունքում իրականացված գործողությունների վերաբերյալ, Բանկին բնորոշ Կոռուպցիոն ռիսկերի էության և մեծության և դրանց նվազեցման ուղղությամբ իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը:

9.2. Սույն քաղաքականության 9.1 կետում նշված տեղեկատվության վերլուծության արդյունքում Բանկի կառավարման մարմինների կողմից տրվում են Հակակոռուպցիոն քաղաքականության բարելավման առաջարկներ:

ԳԼՈՒԽ 10. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

10.1. Բանկի աշխատակիցները՝ անկախ իրենց զբաղեցրած պաշտոնից, պատասխանատվություն են կրում սույն քաղաքականությամբ սահմանված սկզբունքները և պահանջները չպահպանելու համար:

10.2. Սույն քաղաքականության պահանջները խախտած աշխատակիցները Բանկի կողմից ենթարկվում են կարգապահական պատասխանատվության, իսկ Կոռուպցիոն իրավախախտումների հայտնաբերման պարագայում (ՀՀ օրենսդրության համապատասխան նորմերի իրավախախտումների համար) Բանկի նախաձեռնությամբ կարող են ենթարկվել քրեական և/կամ այլ բնույթի պատասխանատվության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 11. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1. Սույն քաղաքականության տիրապետող է հանդիսանում Բանկի համապատասխանության ծառայությունը:

11.2. Սույն քաղաքականությունն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 14-ից:

11.3. Սույն քաղաքականությունն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում «Ֆասթ Բանկ» ՓԲԸ խորհրդի 2024 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ DEC 11-26 որոշմամբ հաստատված Հակակոռուպցիոն քաղաքականությունը՝ [POL 15#1](#):